

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ղազարյան Վանյա Լավրենտիկի

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.01.- «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ  
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Միքայել Վարազդատի Միքայելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ  
Հայկ Գերասիմի Մնացականյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Արմեն Ռովելի Ներսիսյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի պետական տնտեսագիտական  
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. դեկտեմբերի 29-ին, ժամը 11:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52:

Սեղմագիրն առաքվել է 2014 թ. նոյեմբերի 28-ին

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

015 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝



Ա.Հ. Առաքելյան

## ԱՏԵՆԱՒՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Տնտեսագիտության պատմության համաշխարհային փորձը վկայում է, որ որքան էլ որևէ երկրում նախապատվությունը տրվի շուկայական տնտեսության ինքնակարգավորման մեթոդներին և մեծ լինի տնտեսության մեջ մասնավոր հատվածի մասնաբաժինը, երկրների սոցիալ-տնտեսական կյանքում պետությանը, հատկապես ձգնաժամային պայմաններում վերապահվում է գլխավոր դերակատարի առաքելություն: Շուկայական տնտեսության պայմաններում պետությունները հանդես են գալիս ոչ միայն որպես տնտեսական հարաբերությունների սուբյեկտներ, այլ նաև դրանց կարգավորողներ՝ այդ նպատակին ծառայեցնելով մակրոտնտեսական հավասարակշռություն ապահովող միջոցառումներ: Վերջիններիս իրականացման որակական ու քանակական չափորոշիչների ցանկալի մակարդակը էականորեն կախված է հարկաբյուջետային հարաբերությունների արդյունավետությունից, որի ապահովման համար օբյեկտիվ անհրաժեշտություն է հանդիսանում շարունակաբար դրանց զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծման համար համապատասխան հարկաբյուջետային հարաբերությունների ձևավորումը: Մեր հանրապետությունում շուկայական տնտեսական համակարգի ձևավորմանն ուղղված միջոցառումներ, բնականաբար, սկսեցին իրականացվել քաղաքական և տնտեսական անկախությունից հետո: Վերոնշյալ ժամանակաշրջանում իրականացվող միջոցառումների կարևոր հիմնախնդիրներից մեկն էր հանդիսանում շուկայական տնտեսական հարաբերությունների պահանջներին բավարարող հարկաբյուջետային հարաբերությունների ձևավորումը: Վերջինիս առանձնահատկությունների վեր հանմանը, դրա արդյունավետության վրա ազդող գործոնների բացահայտմանը, ինչպես նաև դրա հետ կապված այլ հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները նկատելիորեն օժանդակեցին տվյալ ոլորտում առկա հարաբերությունների կանոնակարգման և արդյունավետ համակարգման համար անհրաժեշտ մեթոդաբանական ու մեթոդական հիմքերի ստեղծմանը: Չնայած վերոնշյալ ձեռքբերումներին, պայմանավորված տնտեսական համակարգի դինամիկ բնույթով և դրան համապատասխան առաջացող նոր մարտահրավերներով, մշտապես արդիական են եկամուտների՝ օպտիմալ մակարդակով հավաքագրման և ծախսերի՝ արդյունավետ իրականացման հետ կապված հիմնախնդիրների, ինչպես նաև տնտեսական զարգացման գործում հարկաբյուջետային հարաբերությունների համակարգի ունեցած դերի համակողմանի վերլուծությանը և նշյալ հարաբերությունների արդյունավետության բարձրացման հիմնահարցերի բացահայտմանն ու դրանց արդյունավետ լուծման համար համապատասխան հարկաբյուջետային հարաբերությունների ձևավորմանը նվիրված հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնախնդիրների ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը:

**Ատենախոսության հիմնական նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակը շուկայական տնտեսական համակարգի կատարելագործմանը և հարկաբյուջետային հարաբերությունների արդյունավետության բարձրացմանը նպաստելու նկատառումներով պայմանավորված հարկաբյուջետային հարաբերությունների զարգացմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել շուկայական տնտեսական համակարգի բնութագրիչ առանձնահատկությունները և դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված պետական միջամտության խնդիրները, ինչպես նաև այդ ուղղությամբ առկա մոտեցումները,
- հարկաբյուջետային հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները դիտարկել դրամավարկային քաղաքականության հետ այդ հարաբերությունների զուգակցման հեռանկարում,
- մշակել առաջարկություններ՝ ուղղված բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանը,
- հարկային հարաբերությունների զարգացման նպատակով հետազոտել ՀՀ հարկային համակարգը և ներկայացնել բարեփոխումների իրականացման մոտեցումներ,
- գնահատել ԵՏՄ-ին ՀՀ-ի անդամակցության հնարավոր ազդեցությունները հարկաբյուջետային հարաբերությունների վրա:

**Ատենախոսության օբյեկտը և առարկան:** Ատենախոսության օբյեկտը հարկաբյուջետային հարաբերությունների զարգացման հիմնախնդիրներն են, իսկ առարկան՝ ՀՀ հարկաբյուջետային համակարգը:

**Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:** Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության ավանդական դպրոցների ընդհանրացումները և եզրահանգումները, հարկաբյուջետային հարաբերություններին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, նշյալ հարաբերությունները կարգավորող օրենսդրաիրավական դաշտը, մասնավորապես, ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները և նորմատիվ իրավական այլ ակտերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և պետական մարմինների համապատասխան պաշտոնական տվյալները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, իրավիճակային, վիճակագրական և համեմատական վերլուծության մեթոդները:

**Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:** Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- առաջարկվում է տրանսֆերային գնագոյացման դեմ պայքարի մեթոդաբանություն,

- հիմնավորվել է հարկային հարաբերություններին վերաբերող օրենսդրաստեղծ գործընթացներում նախագծերի քննարկման ժամանակ իրական հատվածի շահերը ներկայացնող անկախ փորձագիտական խմբերի ներգրավման մեթոդաբանական սկզբունքի արմատավորման անհրաժեշտությունը,
- առաջարկվում է հարկային ստուգումների համակարգում ներդնել մասնավոր հատվածի մասնագիտացված կազմակերպությունների կողմից այլընտրանքային հարկային ստուգումների իրականացման մեխանիզմ,
- պետական բյուջեի ծախսերի արդյունավետության բարձրացմանը նպաստելու նպատակով առաջարկվում է բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մոնիթորինգի և հաշվետվողականության ժամանակակից համակարգը զարգացնել՝ հիմնվելով ոչ ֆինանսական չափորոշիչների կիրառմամբ գնահատման կատարելագործման և ընդլայնման մեթոդաբանական սկզբունքի վրա:

Ատենախոսությունում քննարկված հարցերը վերաբերում են հարկաբյուջետային հարաբերությունների զարգացման հիմնախնդիրներին, որոնք ժամանակի ընթացքում մշտապես պետք է վերանայվեն՝ պայմանավորված տնտեսական համակարգի փոփոխությունների դինամիկայով նոր մարտահրավերների առաջացմամբ և դրանց համապատասխան առավել արդյունավետ ու իրատեսական առաջարկությունների մշակման անհրաժեշտությամբ՝ նպաստելով հարկաբյուջետային հարաբերությունների շարունակաբար զարգացմանը, ինչով էլ պայմանավորված կարևորվում է ընտրված թեմայի արդիականությունը:

Հարկաբյուջետային հարաբերությունների զարգացման հիմնախնդիրների լուծումն ունի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական և սոցիալական նշանակություն:

Ճիշտ ընտրված հարկաբյուջետային հարաբերությունների ճանապարհով հնարավորություններ են ընձեռնվում ստեղծել նաև տնտեսական զարգացման համար նախադրյալներ՝ բարելավելով գործարար և ներդրումային միջավայրը՝ ապահովելով կայուն տնտեսական աճ իր բոլոր դրական հետևանքներով, ինչին պետք է ձգտի յուրաքանչյուր երկրի կառավարություն իր ժողովրդի ապահով և բարեկեցիկ ապրելու համար մտահոգությամբ:

Սոցիալական առումով այն որպես տնտեսական աճի ապահովման համար նախադրյալներ ստեղծող գործոն, կհանգեցնի տնտեսավարողների շրջանառության ծավալների ավելացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ նպաստելով աղքատության կրճատմանը և հասարակության սոցիալական բարօրության ավելացմանը: Սոցիալական առումով այն ապահովում է նաև հասարակության անդամների միջև եկամուտների վերաբաշխման խնդիրների կարգավորման հնարավորություններ, ինչի շնորհիվ կրճատվում է եկամուտների բաշխման խիստ բևեռվածությունը հասարակության անդամների միջև և արմատավորվում է սոցիալական արդարության զգացողություններ՝ մեծացնելով մարդկանց վստահությունը սեփական երկրի և պետության նկատմամբ:

Հարկաբյուջետային հարաբերությունների զարգացումն ունի նաև կարևոր քաղաքական նշանակություն: Վերոնշյալ տնտեսական և սոցիալական

նախադրյալները կարող են կանգնեցնել արտագաղթը մեր երկրից և ամրապնդել մարդկանց հույսը ապագայի հանդեպ:

**Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը:** Հարկաբյուջետային հարաբերությունների զարգացման հիմնախնդիրներին ուղղված՝ ատենախոսությունում իրականացված բազմակողմանի ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկություններն ունեն տեսական ու գործնական նշանակություն և կարող են օգտակար լինել այս ոլորտի խնդիրներով զբաղվող մասնագետների, ինչպես նաև պետական կառավարման մարմինների համար:

**Ատենախոսության արդյունքների փորձաքննությունը և հրապարակումները:** Ատենախոսության արդյունքները քննարկվել են ոլորտի տեսաբան և/կամ գործնականում այդ խնդիրներով զբաղվող մասնագետների հետ, ինչպես նաև ԵՊՀ-ի տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսության» ամբիոնի նիստում: Ատենախոսության թեման ամփոփվել և ներկայացվել է հեղինակի յոթ գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունն առանց հավելվածների շարադրված է 148 էջի վրա:

## **ԱՏԵՆԱՆՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են ատենախոսության նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, ներկայացվել են ատենախոսության տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը, ստացված արդյունքների կիրառական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսության հրապարակումները, կառուցվածքն ու ծավալը:

**Ատենախոսության առաջին՝ «Պետության դերը շուկայական տնտեսության պայմաններում և տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը» գլուխը** նվիրված է տնտեսական համակարգերի առանձնահատկությունների նկարագրմանը, հասարակության մեջ պետության ինստիտուտի առաջացմանը և հասարակական կյանքի կազմակերպման համար դրա անհրաժեշտությանը, ինչպես նաև շուկայական տնտեսական համակարգի բնականոն գործունեության ապահովման նպատակով պետական միջոցառումների իրականացման կարևորության հիմնավորմանը:

Հասարակությունն իր գոյության պահպանության համար ստեղծում է բարիքներ, որոնց արտադրության, բաշխման ու սպառման համար մարդիկ մտնում են փոխհարաբերության մեջ: Այդ փոխհարաբերությունների ամբողջության արդյունքում էլ ձևավորվում է տնտեսական համակարգ: Այսինքն, տնտեսական համակարգը հանդիսանում է մարդկության տնտեսական հարաբերությունների կրողն ու արտացոլողը: Այդ համակարգերի առանցքային տարրերից գիծը սեփականության ձևերի և գործարարությամբ զբաղվելու հնարավորությամբ

է պայմանավորված, սակայն արժեքային լուրջ փոփոխություններ, որոնք տեղի են ունենում ժամանակի և տարածության մեջ հանգեցնում են սոցիալ – տնտեսական համակարգի բարդացման: Պայմանավորված այդ փոփոխություններով անհրաժեշտություն է առաջանում նորովի գնահատել նաև համակարգի ներքին շարժիչ ուժերի ուղղվածությունը. «ժամանակակից գիտության տեսակետից ներկայումս քաղաքակրթությունը ընտրության առջև է կանգնած, վերահաս զլոբալ աղետ՝ որպես հետևանք շրջակա միջավայրում անտրոպոգեն (մարդածին) փոփոխությունների աճող հեղեղի՝ ավանդական ուղու պահպանման միտումների պարագայում, կամ վերակողմնորոշում դեպի զարգացման նոր ուղի: Ժամանակակից ճգնաժամը հերթաանն է իր գոյության ընթացքում մարդկության ապրած զլոբալ ճգնաժամերի շարքում»<sup>1</sup>: ՌԻՍՏԻ առաջին հերթին հարկավոր է պարզել սոցիալ-տնտեսական համակարգի բարդացման պատճառներն ու միտումները և հնարավոր հետևանքները հասարակության, մարդու վրա: Դրանք բացահայտմանն ու գնահատմանը համընթաց ավելի է ընդգծվում այն տեսակետը, համաձայն որի տնտեսական համակարգի զարգացմանը համապատասխան ոչ թե փոքրանում է պետության դերակատարությունը սոցիալ-տնտեսական համակարգին միջամտության գործում, այլ ընդհակառակը, ավելի է կարևորվում տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը: Այս տեսակետից, կապված շուկայական մոդելի ընտրության հետ, սմիթյան հայեցակարգը կարծես թե կորցնում է իր արդիականությունը: Այստեղ հարկավոր է նշել, որ հիմնախնդիրը կայանում է պետության անհրաժեշտ արդյունավետության ապահովման հնարավորությունների մեջ, ինչի մասին միասնական տեսակետներ գոյություն չունեն և չենք կարող խոսել միանշանակ: Այս առումով շատ դիպուկ է Ջ. Գոռթնիի հետևյալ միտքը. «Գոյություն չունեն այնպիսի կանոններ Կառավարության պատշաճ դերի վերաբերյալ, որոնք կարող են հաստատվել բանականությամբ»<sup>2</sup>: Շուկայական տնտեսությանը պետության միջամտության նկարագրության և սահմանների ընտրության հարցում կարևոր է պատմության դասերը. «Ուշագրավ է այն հանգամանքը, որ պետության տնտեսական դերին առնչվող այս կամ այն արմատական հայեցակարգին ամենածանրակշիռ ու համոզիչ հակափաստարկը ներկայացրել է իրական կյանքը՝ ստիպելով կենսագործել հակադիր քաղաքականություն: Այսպես, 1929-1933 թթ. Մեծ ճգնաժամը նման մի փաստարկ էր՝ ընդդեմ դասական տեսության, հոգուտ պետական միջամտության անհրաժեշտության և հանուն տվյալ տնտեսակարգի կենսունակության պահպանման ու բնական զարգացման: Մեծ դեպրեսիայի հաղթահարման հարցում շուկայական մեխանիզմի անընդունակության գիտակցումը ելակետ ծառայեց Ջ. Քեյնսի ուսմունքի մշակմանն ու հիմնավորման, ինչպես նաև դրա գործնական կիրառման համար: Նմանապես, կոմունիստական տնտեսակարգի քայքայումը առավել ճնշող փաստարկներ էր՝ ընդդեմ հրամայական տնտեսության անցման գործընթացների ծավալմանը»<sup>3</sup>: Այսպիսով, պատմական փաստերին հետադարձ հա-

<sup>1</sup> «Մարդկային զարգացման հիմունքներ», ուսումնական ձեռնարկ, Եր., Նոյյան Տապան, 2004, էջ 14:

<sup>2</sup> Գոռթնի Ջ., «Տնտեսագիտություն», Երևան 1999, էջ 886:

<sup>3</sup> ՀՊՏՀ, «Տնտեսագիտության տեսություն» Երևան-2009, խմբ. Գ. Կիրակոսյան, էջ 175:

յացք նետելով՝ համոզվում ենք, որ իրականում տնտեսական կյանքը տեսագործական առումով արդյունավետորեն նպաստել է «կամ պետություն, կամ շուկա» երկընտրանքից հրաժարվելուն ու դրա փոխարեն «և՛ պետություն, և՛ շուկա» զուգընտրանքն ընտրելուն: Ցանկացած հասարակություն գոյություն ունի և զարգանում է պետության շրջանակներում: «Հասարակության մեջ ապրող սուբյեկտի (մարդու) համար պետությունը հատուկ քաղաքական ինստիտուտ է, կազմակերպված, որն իրականացնում է պետական իշխանություն: Որպես հասարակական երևույթ, այն իրենից ներկայացնում է համամարդկային արժեք»<sup>4</sup>: Դեռևս նախնադարյան համայնավարական հասարակարգի ժամանակներից մարդկային տոհմերում ու ցեղերում դրսևորվում էր պետությանը բնորոշ վարքագիծ, օրինակ, մարդիկ համախմբվում ու միավորվում էին առաջնորդի շուրջ, ով ընդունակ էր պաշտպանել արտաքին վտանգներից, ինչպես նաև դատել, այսինքն՝ հաստատել արդարություն և այսպիսով պաշտպանել նրանց ներքին «թշնամիներից»: Այսինքն, այստեղից հետևություն, որ քաղաքական առաջնորդի, քաղաքական իշխանության և պետության գործառույթներն ի հայտ են եկել բնական, էվոլյուցիոն զարգացման ընթացքում: Ինչքան բազմազան և տարաբնույթ են հասարակական կյանքի կողմերը, այնքան ընդգրկուն է այն հիմնահարցերի շրջանակը, որոնք հասարակական կարգավորման և քաղաքական, պետական միջամտություն են պահանջում: Հասարակական կյանքի ամբողջական կազմակերպման ու կառավարման հիմնական ձևը մնում է պետությունը: «Արտաքին վտանգներից երկրի և նրա բնակչության պաշտպանությունը, երկրի ներքին կյանքում իրավակարգի հաստատումը, օրինականության ու հասարակական կայունության պահպանումը պետության գոյությունն իմաստավորող անհրաժեշտ ուղղակի գործառույթներն են»<sup>5</sup>: Սակայն ի թիվս վերոնշյալ գործառույթների, ցանկացած պետության վերապահվում են նաև տնտեսական, ֆինանսական գործառույթներ: Տարբեր երկրներում դա իրականացվում է տարբեր ձևերով, չափերով ու արդյունքներով, որոնց բնորոշ են ինչպես ընդհանրություններ, այնպես էլ յուրահատկություններ: Բոլոր դեպքերում ժամանակակից ժողովրդավարության պայմաններում պետությանն առաջադրվում է ընդհանուր գերխնդիր՝ հասարակության՝ որպես սոցիալ-տնտեսական օրգանիզմի կառավարումը և նորմալ կենսագործունեության ապահովումը: Այդ առումով օրինաչափ է վերջին տասնամյակներում պետության տնտեսական դերի կարևորության աստիճանի ակնառու ընդգծումը, ինչպես նաև այն, որ երկրում սոցիալ-տնտեսական վիճակի վերջնական պատասխանատուն պետությունն է: Վերոնշյալ շարադրանքի հիման վրա մենք համոզվում ենք, որ որևէ տիպի պատկանող «մաքուր» տնտեսական համակարգ չկա, և շուկայական տնտեսությունը, որպես կանոն, հանդես է գալիս խառը համակարգի տեսքով: «Արդի աշխարհում շուկայական տնտեսությունը երկրների գերակշիռ մասի տնտեսության թեև հենքային, բայց ոչ միակ հատվածն է: Իրական տնտեսակարգերը շուկայական մասնավոր և պետական, հանրային հատվածների փոխմիահյուսված ամբողջությունն են, ինչը հայտնի է

<sup>4</sup>«Մարդկային զարգացման հիմունքներ», նշված աշխատանք, էջ 249:

<sup>5</sup>ՀՊՏՀ, նշված աշխատանք, էջ 173:



«խառը տիպի տնտեսություն» կամ պարզապես՝ «խառը տնտեսություն» անվանումով»<sup>6</sup>: Ընդհանուր բնորոշմամբ տեղին է ասված հետևյալ միտքը. «Մարդկային հասարակության զարգացման գնահատումը, վերլուծությունն ու նպատակաուղղումը, պատմական գործոնների բացասական ազդեցությունից զերծ պահելը և մարդկության գոյության ողջ ընթացքում զարգացման անընդհատության ապահովումը գիտության ամենամեծ գերակայությունն է և այն գերխնդիրն է, որի առաջնահերթ լուծմանը պետք է նպատակաուղղված լինի ու ծառայի մարդկության ստեղծագործական ներուժը և որը պետք է մշտապես գտնվի մարդկային ողջ հասարակության ու կառավարման համապատասխան մարմինների ուշադրության կենտրոնում»<sup>7</sup>: Շուկայական տնտեսական համակարգը ժամանակակից հատկանիշներով լիարժեք ձևավորվել է XVIII դարում և այն համարվում է ամենաձկուն տնտեսական համակարգն իր ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ ինքնուրույն վերափոխվելու և զարգանալու կարողությամբ: Իր պատմական զարգացման ընթացքում, այն դրսևորվել է դասական շուկայական տնտեսության, խառը տնտեսության և սոցիալ-շուկայական տնտեսության ձևերով: Համաձայն Ա. Սմիթի, դասական շուկան կարգավորվում է «անտեսանելի ձեռքի» միջոցով և չի ընդունում պետության միջամտությունը. «Հետապնդելով իր սեփական շահերը՝ նա (անհատը) ավելի գործուն ձևով է ծառայում հասարակության շահերին, քան այն դեպքում, երբ գիտակցաբար է ձգտում այդ անել»<sup>8</sup>: Նոր դասական ուղղության հիմնադիր Ա. Մարշալն իր «Տնտեսագիտության սկզբունքները» աշխատության մեջ շուկան բնութագրում է որպես «մարդկանց ցանկացած խումբ, որը մտնում է գործարար կապերի մեջ և կնքում ապրանքի հետ կապված գործարքներ»<sup>9</sup>: Մեկ այլ առումով Ա. Մարշալը շուկան բնորոշում է որպես «առաջարկի և պահանջարկի փոխհարաբերության համակարգ», որը կարգավորվում է պահանջարկի և առաջարկի օրենքով<sup>10</sup>: Ամերիկացի տնտեսագետ, շուկայագետ Ֆիլիպ Կոտլերը շուկայի բնութագրումը կատարում է հիմք ընդունելով սուբյեկտների վարքագիծը: Նրա «Մարքեթինգի հիմունքները» աշխատության մեջ շուկան սահմանված է որպես «ապրանքների առկա և հնարավոր գնորդների ամբողջություն»<sup>11</sup>: 20-րդ դարի սկզբին ստեղծվեց մի իրավիճակ, երբ կատարյալ մրցակցային շուկայական մեխանիզմը սկսեց «չհամապատասխանել» նոր պահանջներին: Դրանով պայմանավորված, զարգացած երկրներում աստիճանաբար սկսեց ձևավորվել խառը տնտեսություն, որը գործում է շուկայական մեխանիզմի և տնտեսության պետական կարգավորման սկզբունքներով: Շուկայական տնտեսության պատմական զարգացման ընթացքում պետության նման դերի առաջացումը պայմանավորված է արտադրական և սոցի-

<sup>6</sup>ՊՏՀ, նշված աշխատանք, էջ 166:

<sup>7</sup>ՀՀՖԵՆ, ՏՀԻ, «Վերափոխումները անցումային շրջանում, տեսություն և արդյունքներ», Պետական ծառայություն, 1999, էջ 57:

<sup>8</sup>Смит А. «Исследование о причинах богатства народов», М., 1962, стр 332.

<sup>9</sup>А. Маршал, Принципы экономической науки, кн. II. М., изд-во "Прогресс", 1993, с. 6.

<sup>10</sup>Նույն տեղում, էջ 27,

<sup>11</sup>Ф. Котлер, Г. Армстронг, Дж. Сондерс, В. Вонг "Основы маркетинга", Киев-Москва-Санкт-Петербург, 1998, с. 28

ալական ենթակառուցվածքների զարգացման անհրաժեշտությամբ ու գիտատեխնիկական առաջընթացով: Ի տարբերություն դասական շուկայի՝ խառը տնտեսության համար առավել առանձնահատուկ է կոլեկտիվ մասնավոր սեփականությունը՝ բաժնետիրական ընկերությունների ձևով և կորպորատիվ կառավարմամբ: Պետության հիմնական գործառույթը խառը տնտեսությունում դրսևորվում է սոցիալական խնդիրների լուծմամբ և հասարակական բարիքների նկատմամբ հասարակության պահանջմունքները բավարարելու ճանապարհով ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի հավասարակշռվածության կարգավորմամբ՝ օգտագործելու տնտեսական և ֆինանսական տարբեր գործիքներ ու լծակներ: Անհրաժեշտ է, որ պետությունն այդ գործառույթներն իրականացնի՝ հաշվի առնելով շուկայական մեխանիզմը և նրա պահանջներն ու առանձնահատկությունները: Այդ կապակցությամբ դիպուկ է Պոլ Վալերիի պատկերավոր արտահայտությունը. «Ուժեղ պետությունը ճնշում է մեզ, իսկ թույլի դեպքում մենք զոհվում ենք»<sup>12</sup>: Իսկ մեկ այլ բնորոշման համաձայն «Շուկան, թեև իր բնույթով տարերային է, սակայն կենսունակ մեխանիզմ է՝ ունակ լուծելու հասարակության առջև ծառայած տնտեսական հիմնական խնդիրները, հակառակ դեպքում առաջանում են ոչ ցանկալի իրավիճակներ»<sup>13</sup>: Համաձայն մեկ այլ տեսակետի. «Ինչպես հայտնի է, շուկան ունի բացասական դրսևորումներ. Չի նպաստում չվերարտադրվող ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանմանը, չի խթանում կոլեկտիվ սպառման ապրանքների և ծառայությունների (կրթություն, առողջապահություն, սպորտ) արտադրությունը, չի երաշխավորում աշխատելու, հանգստի և եկամուտ ստանալու իրավունքը, գիտության, կրթության զարգացման համար չի ստեղծում անհրաժեշտ պայմաններ, չի երեշխավորում լրիվ զբաղվածություն և գների կայուն մակարդակ՝ առաջ բերելով անհավասարություն»<sup>14</sup>: Շուկայական տնտեսական համակարգին բնորոշ այսօրինակ բացերի «լրացման» է նպատակաուղղվում պետության կողմից իրականացվող կարգավորիչ տարբեր միջոցառումներ, որի անհրաժեշտությունը գիտականորեն առաջին անգամ հիմնավորեց Քեյնսը, ինչի շնորհիվ նա դարձավ կործանման եզրին կանգնած կապիտալիստական շուկայական տնտեսության «մարգարեն»: Պետական կարգավորումն իր հերթին լրացնում ու կանոնավորում է զուտ շուկայական մեխանիզմը: Այս առիթով ինչպես գրում է Սամուելսոնը. «Շուկայական տնտեսությունն առանց մշակված պետական միջամտությամբ ղեկավարելը նույն է, թե ծափահարել մեկ ձեռքով»<sup>15</sup>:

Թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հարկաբյուջետային հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները մշտապես արդիական են շուկայական տնտեսության զարգացման և ընդհանրապես հասարակության բարրության ապահովման հիմնահարցերի բացահայտ-

<sup>12</sup>Курс экономической теории: учебник под редакцией проф. М. Н. Чепурина, г. Киров, АСА, 2004, с. 358:

<sup>13</sup>Ռուբիկ Թովմայան, Շուկան և տնտեսության պետական կարգավորման հիմնահարցերը», Բանբեր, ԵՊՏՀ-2005, թիվ 2, էջ 126-135:

<sup>14</sup>Նույն տեղում, էջ 126-135:

<sup>15</sup>Пол Самуэльсон, «Экономика: вводный анализ», 1948, ст 13:

ման և կարգավորման շրջանակներում: Հարկաբյուջետային հարաբերությունների զարգացման հիմնահարցերը քննարկվում են ինչպես տնտեսագետների ու պետությունների ղեկավարների, այնպես էլ քաղաքական գործիչների մակարդակով, քանի որ ցանկացած ժողովրդավարական, առավել ևս զարգացած երկրներում հարկաբյուջետային հարաբերություններն իրականացվում են համապատասխան օրենսդրական դաշտի ապահովմամբ և դրա հետևողական կիրառմամբ:

**Ատենախոսության երկրորդ՝ «Հարկաբյուջետային և դրամավարկային հարաբերությունները և դրանց զուգակցման հիմնահարցերը ՀՀ-ում» գլուխը** վերաբերում է հարկաբյուջետային և դրամավարկային հարաբերությունների նկարագրությանն ու դրանց զուգակցման անհրաժեշտությանն այդ հարաբերությունների արդյունավետության բարձրացման նպատակով: Այս գլխում ընդգծվում է, որ հասարակական հարաբերություններում հարկման հարաբերությունների առկայությունը և դրանց բնորոշ առանձնահատկությունները պայմանավորված են տվյալ հասարակությունում պետության ունեցած դերով, իսկ հարկը, որպես հասարակական երևույթ, գոյություն է ունեցել պետության ծագման դեռևս արշալույսին և վերջինիս էվոլյուցիայի ամբողջ ընթացքում՝ ցույց տալով, որ հարկերը ձևավորվել են դեռևս մարդկային քաղաքակրթության վաղաննջական ժամանակներից, իսկ դրանց ի հայտ գալը ինքնին կապված է առաջին հասարակական պահանջունքների հետ: Այսինքն, այստեղից հետևություն, որ հարկային համակարգը ծագել և զարգանում է պետության հետ միասին, ինչը վկայում է դրա էվոլյուցիոն զարգացման մասին: Նախ դրա անհրաժեշտությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ պետության՝ որպես հասարակական կառավարման բարձրագույն ինստիտուտի կայացման և համապատասխան մեխանիզմների ապահովման համար անհրաժեշտ են միջոցներ, ինչի հետևանքով տնտեսագիտական վերլուծության ժամանակ հարկը շատ հաճախ դիտվում է որպես հարկադրանք: Երկրորդ գլխում կատարված ուսումնասիրության արդյունքում ցույց է տրվում, որ հարկման հարցերում իշխանությունների և քաղաքացիների հակամարտությունները շատ ժամանակ չափազանց դրամատիկ են եղել, ինչը կարելի է բացատրել հարկի՝ որպես կարևոր հասարակական երևույթի և հասարակական հոգեբանության կարևոր ազդակ լինելու հանգամանքներով: Հաշվի առնելով վերոնշյալը՝ առավել դյուրըմբռնելի և արդյունավետ հարկային հարաբերություններ ունենալու նպատակով անհրաժեշտ ենք համարում հարկային համակարգին վերաբերող որոշումների նախագծերը ներկայացնել շահագրգիռ բոլոր կողմերի հետ քննարկման և որոշումներ կայացնել վերջիններիս տեսակետների և դրանց վերաբերյալ հիմնավոր եզրահանգումների առկայության պայմաններում, քանի որ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության պատվերով հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից մեր հանրապետությունում իրականացված՝ «Հարկային ընկալումները Հայաստանում. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների 2013թ. Հետազոտություն» Հայաստանի հարկային բարեփոխումների ծրագրի շրջանակներում

իրականացված հետազոտությանը արձանագրված արդյունքների<sup>16</sup> համաձայն, գործարարների հիմնական մասը՝ 76 %-ը, հարկային համակարգը համարել է անկանխատեսելի, նրանք նշել են, որ չեն կարող կանխատեսել, թե որքան կլինի իրենց հարկային բեռը հաջորդ տարի, տրամաբանական է, որ հարկային բեռը անկանխատեսելի համարելով՝ գործարարները նաև համոզված են, որ իրենք ներգրավված չեն հարկային օրենսդրության մեջ փոփոխություններ նախատեսող նախաձեռնությունների քննարկումներին (94 %), կամ էլ՝ ներգրավված են, սակայն չեն կարողանում որևէ ազդեցություն ունենալ (6 %)<sup>17</sup>: Դեռևս Ֆրենսիս Բեկոնը «Բարոյական և քաղաքական փորձեր կամ խրատներ» իր աշխատությունում հարկերի մասով գրել է հետևյալը. «Ժողովրդի համաձայնությամբ գանձվող հարկերը այնքան էլ չեն թուլացնում նրա արիությունը: Դրա օրինակ կարող են ծառայել Նիդեռլանդներում կիրառվող տուրքերը: Նկատենք, որ մեզ մոտ այս դեպքում խոսքը գնում է ոչ թե դրամապանակի, այլ սրտի մասին: Հարկը, որը գանձվում է ժողովրդի համաձայնությամբ կամ առանց դրա, կարող է նույնը լինել գրպանի համար, բայց նույն կերպով չի գործում ժողովրդի ոգու վրա: Թող հզորության ձգտող պետությունը թույլ չտա ազնվականության խիստ բազմացումը, քանի որ նման պայմաններում հասարակ ժողովուրդը դառնու է բուր ու մոռացված է աշխատում է միայն պարոնների համար»<sup>18</sup>: Ինչպես տեսնում ենք, Բեկոնը հարկային հարաբերություններում առաջնահերթ նշանակությունը տալիս է հասարակ քաղաքացու վարքագծին ու հարկահավաքմանը նրա վերաբերմունքին: Այստեղից կարող ենք հանգել այն մտքին, որ մեր ժամանակներում նույնիսկ հարկադրաբար կատարվող հարկահավաքման հիմքում պետք է լինի նաև հարկ վճարողի գիտակցությունը և կամավորությունը, ինչին, բացի վերոնշյալ օրենսդրաստեղծ մեթոդաբանության արմատավորմանը, կարող է նպաստել նաև դեռևս միջնակարգ կրթության ժամանակ հարկերի, հարկային համակարգի և հարկերի վճարման անհրաժեշտության վերաբերյալ գիտելիքների սերմանումը, ինչը մեր կարծիքով հնարավորություն կտա շատ առումներով բարեփոխել հասարակության վերաբերմունքը հարկերի, հարկային համակարգի և հարկահավաքման գործընթացի նկատմամբ՝ նպաստելով հարկային հարաբերությունների զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանը: Ասվածի համար ուշագրավ է վերոնշյալ հարցման արդյունքները<sup>19</sup>, համաձայն որի հարցվածների միայն 10 տոկոսն է գիտակցված պատասխանել այն հարցին, որ հարկ վճարելով նպաստում է հանրային խնդիրների լուծմանը՝ կատարելով իր քաղաքացիական պարտքը<sup>20</sup>: Այս հանգամանքին նույնպես պետք է կարևորվի, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն երկրները, որտեղ հասարակության անդամների մոտ բացակայում է կամ թույլ է հարկահավաքման գործընթացին գի-

<sup>16</sup> www.trp.am

<sup>17</sup> «Հարկային ընկալումները Հայաստանում. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների 2013թ. հետազոտություն», էջ 4:

<sup>18</sup> Все началось с десятины. Общ. Ред. Б.Е.Лания, М. 1992, с. 74.

<sup>19</sup> www.trp.am

<sup>20</sup> «Հարկային ընկալումները Հայաստանում. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների 2013թ. հետազոտություն», էջ 4:

տակցված, ինքնակամ մասնակացության հոգեբանական դաստիարակության աստիճանը, բավականին լուրջ խնդիրներ են ունենում տնտեսության ստվերայնության դեմ պայքարում: Նման պայմաններում որքան էլ կատարյալ լինեն գործող օրենքները և կարգերը, միևնույն է, դրանք չեն գործում նախատեսված ձևով, չեն ծառայի իրենց նպատակին, և կմնան ընդամենը որպես փաստաթղթեր, իսկ իրական կյանքում կգործեն այլ սկզբունքներ, որոնք ոչ միայն չեն նպաստի հարկման հարաբերությունների հետագա առողջացմանը, այլև ավելի կխորացնեն ու կսրեն ներքին հակասությունները:

Հարկաբյուջետային հարաբերությունների ծախսային մասը ներկայացնելով, նշենք, որ եկամուտների աղբյուրների ընտրության, դրանց չափի հիմնավորման հարցերի կարևորության հետ միաժամանակ խիստ կարևոր է նաև բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման հարցը, քանի որ ներկայումս համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող գործընթացները վկայում են տնտեսության կարգավորման հարցում պետության դերի բարձրացման մասին, որն առաջ է բերում նոր ֆունկցիաներ, ինչով էլ պայմանավորված էլ ավելի է կարևորվում ծախսերի առավել արդյունավետ իրականացման հարցը: Այսինքն յուրաքանչյուր կառավարություն պետք է ձգտի, իր ունեցած սահմանափակ բյուջետային միջոցներով հասնել առավելագույն արդյունավետության, իսկ դա հնարավոր է այն դեպքում, երբ այդ սահմանափակ միջոցները կուղվեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանն առավել համահունչ երկարաժամկետ ծրագրերի իրականացմանը: Այստեղ միանշանակ չենք կարող սահմանափակվել միայն միջոցների քանակությամբ: Խիստ կարևոր նշանակություն ունինաև դրանց ծախսման արդյունավետ ուղղությունների որոշումը: Հարկաբյուջետային հարաբերություններն ունեն սոցիալական համակարգին բնորոշ մի շարք առանցքային դրդապատճառներով պայմանավորված իրենց գաղափարախոսական հիմքերը և դրանց իմացության ու գնահատման միջոցով է հնարավոր հասնել իրականացվող հարկաբյուջետային հարաբերությունների արդյունավետություն բարձրացմանը: Դրամավարկային հարաբերությունների առանձնահատկությունների ներկայացման հետ կապված, նշենք, որ գլոբալ ֆինանսական ճգնաժամի տարածումը ցույց տվեց, որ ԿԲ-ները ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ զարգացող տնտեսությամբ երկրներում չկարողացան ապահովել ազգային դրամավարկայի կարգավորմանն ազնավարական, մարտավարական և գործառնական նպատակների արդյունավետ իրագործումը, ինչպես դրանք ընկալվում էին մինչև ճգնաժամը: Ֆինանսական գլոբալիզացիայի և ազգային ֆինանսական շուկաների էական ինտեգրացիայի պայմաններում մոնետար քաղաքականության բնագավառում առաջավոր մասնագետները, որպես դրամավարկային կարգավորման հիմնական նպատակներ, առաջարկեցին ընդլայնել ԿԲ-ի իրավասությունները՝ կապված ֆինանսական համակարգի օժանդակության հետ, սակայն այս նոր մոտեցումն ունի հակասություն դրամավարկային կարգավորման ներկայիս՝ գների կայունության օժանդակության առաջնահերթության նպատակի հետ: Հարկաբյուջետային և դրամավարկային հարաբերությունների զուգակցման հետ կապված կարևորվում է այն հանգամանքը, որ ՀՀ ԿԲ-ն հետևողականորեն պետք է համագործակցի Կառավարության հետ հարկաբյուջետային և դրամա-

վարկային միջոցառումների կոորդինացման հարցերում՝ որպես դրանց արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայման: Այս համագործակցությունը պետք է ուղենշվի նաև երկարաժամկետ հատվածի համար, քանի որ ՀՀ տնտեսության զարգացման կայուն և տևական երաշխիքների ապահովման համար կարևոր նշանակություն ունի տնտեսությունում երկարաժամկետ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ դրանց շարքին դասելով հարկաբյուջետային և դրամավարկային միջոցառումների կոորդինացումը երկարաժամկետ և կարճաժամկետ հատվածում: Երկարաժամկետ հատվածում զուգակցման հիմնական խնդիրը հարկաբյուջետային և դրամավարկային համահունչ հարաբերությունների ծրագրումն է, որը կնպաստի տնտեսության կայուն աճի ապահովմանը՝ վերահսկելով սղաճը և ֆինանսական համակրգի կայունությունը՝ միաժամանակ զարգացման ու տնտեսական աճի բարենպաստ պայմաններ ստեղծելով: Ներկայումս վերոնշյալ սկզբունքով հարկաբյուջետային և դրամավարկային հարաբերությունների զուգակցման համար ՀՀ Կառավարությանը և ՀՀ ԿԲ-ն առաջնահերթ պետք է կարգավորեն մի հիմնախնադիր, որի էությունը կայանում է հետևյալում. հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության ուղղությունների մշակման ոլորտում երկու քաղաքականությունների զուգակցմանը խոչընդոտում է հիմնական փաստաթղթերի մշակման ժամկետների անհամապատասխանությունը, մասնավորապես, բյուջետային գործընթացի ժամանակացույցով ՀՀ պետական բյուջեի հիմքում ընկած մակրոտնտեսական ծրագրերի մշակման աշխատանքները սկսվում են դեռևս սեպտեմբերից և հաստատվում այդ ամսվա ընթացքում, մինչդեռ դրամավարկային քաղաքականության հաջորդ տարվա ծրագիրն ընդունվում է ԿԲ-ի խորհրդի կողմից միայն այդ տարվա առաջին եռամսյակում: Սա գործնականում անհնար է դարձնում ծրագրերի կոորդինացումը: Մյուս կողմից, դրամավարկային քաղաքականության ծրագրերը եռամսյակային են և յուրաքանչյուր եռամսյակ ձգարտվում են հաջորդող երեք տարվա հորիզոնով կանխատեսումները՝ հրապարակելով նոր ծրագրեր, մինչդեռ բյուջեի կատարման համամասնությունները տվյալ տարվա առաջին եռամսյակում հաստատվելուց հետո այլևս ձգարտման չեն ենթարկվում, կամ ձգարտվում են սակայն ձգարտված ծրագրեր չեն հրապարակվում և քննարկվում, այսինքն կորում է կապը երկու տնտեսական ծրագրերի իրականացման միջև:

**Ատենախոսության երրորդ՝ «Հարկաբյուջետային հարաբերությունների զարգացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլուխը** նվիրված է հարկային հարաբերությունների զարգացման հնարավորությունների ուսումնասիրմանը և պետական եկամուտների ձևավորմանն ուղղված միջոցառումների կատարելագործման առաջարկությունների ներկայացմանը, ինչպես նաև պետական ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնադիրների բացահայտման և դրանց կարգավորմանը նվիրված ոլորտների մշակմանը: Հարկային համակարգի կատարելագործման հնարավոր ուղիների վեր հանման նպատակով աշխատանքում նախ կարևորում է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման, ինչպես նաև տարաբնույթ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների կարգավորման համար նախ և առաջ կարևոր նախապայման է հանդիսանում պետական եկամուտների հավաքագրման ուղ-

դրությամբ արդյունավետ մեթոդաբանական մոտեցումների տեսական մշակումը: Նման մոտեցումը, ակնհայտորեն, ենթադրում է պետության ֆինանսական միջոցների ձևավորման և տնտեսության զարգացման համար անհրաժեշտ խթանների ստեղծման ուղղված հարկային արդյունավետ դրույքաչափերի և հավաքագրման ուղղությամբ արդյունավետ հարկային վարչարարության մեթոդաբանության մշակում և իրականացում, քանի որ, ըստ էության, դրանից է ուղակիորեն կախված պետության գործառույթների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համալրումը և մյուս կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար նպաստավոր միջավայրի ապահովումը: Այնուհետև շարունակել ենք մանրամասն վերլուծության ենթարկել ՀՀ-ում վերջին տարիներին իրականացված հարկային համակարգի փոփոխությունները, արդյունքում փաստելով և արժևորելով այն հանգամանքը, որ հարկային ու մաքսային համակարգերի զարգացման տեսանկյունից պետք է կարևորվի հարկային և մաքսային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրության վերանայումները և պետական եկամուտների քաղաքականության ու վարչարարության մեթոդաբանության շարունակաբար կատարելագործումը: Առաջնորդվելով այս դրույթներով և մեր պետական պարտքի կայունացման խնդրով, աշխատանքում հանգել ենք այն եզրահանգման, որ հետագա տարիներին հարկային և մաքսային ոլորտներում իրականացվող քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության տեսական մշակումները նպատակահարմար է ուղղված լինեն հետևյալ չորս կարևոր խնդիրների լուծմանը.

1) մոտակա տարիներում պետական բյուջեի միջոցների ընդլայնման հիմնական աղբյուր՝ պայմանավորված նոր պետական պարտք վերցնելու կառավարության հնարավորությունների սահմանափակմամբ, հանդիսանալու են հարկային եկամուտները,

2) ելնելով ներդրումային միջավայրի խթանման անհրաժեշտությունից՝ հարկային և մաքսային վարչարարության մեթոդաբանության շարունակաբար բարելավմանը,

3) տրանսֆերային գնագոյացման դեմ պայքարի արդյունավետ համակարգի ներդրմանը,

4) բացառապես արտաքին գործունեություն իրականացնող ընկերությունների համար հարկման հատուկ ռեժիմի սահմանմանը:

Միևնույն ժամանակ, հատկանշական է այն, որ հարկային եկամուտների աստիճանական աճի միջոցով պետական բյուջեի միջոցների ընդլայնման և գործարար միջավայրի բարելավման ու մրցունակության ապահովման նպատակներն անխուսափելի հակադրություններ կարող են առաջացնել: Այստեղ հիմնախնդիրը դրանց հավասարակշռվածության ապահովումն է: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հարկային համակարգի արդյունավետ սկզբունքների կիրառությամբ պետական բյուջեի եկամուտների համալրման բնագավառում կարելի է ձևավորել այնպիսի հավասարակշռված մոտեցում, որի շնորհիվ կստեղծվեն կայուն նախադրյալներ՝ վերոնշյալ նպատակադրումները զուգահեռաբար իրագործելու համար: Ներկայումս մեր հանրապետությունում միայն հարկային մարմնի կողմից իրականացվող հարկային ստու-

գումների համակարգին անհրաժեշտ է ստեղծել հակակշիռ և տնտեսավարող սուբյեկտների համար այլընտրանք՝ միաժամանակ նպաստելով հարկային համակարգի արդյունավետության և տարածաշրջանային մակարդակով մրցունակության բարձրացմանը, ինչի համար նպատակահարմար է ներդնել մասնավոր կազմակերպությունների միջոցով իրականացվող այլընտրանքային հարկային ստուգումների համակարգ: Մեր հանրապետության հարկային համակարգի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ համակարգի ներկայիս կառուցվածքը թույլ է տալիս կատարել տրանսֆերային գնադրացման չարաշահումներ, ինչը հնաչավոր է կարգավորել գործող օրենսդրության պայմաններում: Մասնավորապես, վերջին տարիների միջազգային առևտուրը, օտարերկրյա ներդրումների մակարդակը աճել են՝ ՀՀ հարկման բազանները (եկամտահարկի, շահութահարկի, մետաղական օգտակար հանածոների ռոյալթիների մասով) ենթարկելով ռիսկի՝ կապված տրանսֆերային գնադրացման չարաշահումների հետ, մեծածավալ առևտուր է իրականացվում ազատ տնտեսական և օֆշորային գոտիներում: «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնց արդյունքում մետաղական օգտակար հանածոների համար վճարվող ռոյալթիները կարող են ուղակիորեն կապված լինել փոխկապակցված անձանց գործարքների հետ և չնայած Հայաստանը աշխարհի 37 երկրների հետ ունի կրկնակի հարկման համաձայնագրեր (գործող), սակայն գործող օրենսդրությունը բավարար է տրանսֆերային գները վերանայելու և ճշգրտելու համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ առկա հիմնախնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ներդնել տրանսֆերային գնադրացման դեմ պայքարի այնպիսի մեթոդաբանություն, որի շրջանակներում որպես կարգավորման առարկա պետք է հանդիսանան հատկապես փոխկապակցված անձանց միջև տեղի ունեցող միջազգային, ինչպես նաև օֆշորային գոտիներում գրանցված անձանց հետ իրականացվող գործարքները՝ դրանց օբյեկտիվության գնահատման համար կիրառելով համադրելի չվերահսկվող գնի մեթոդը, վերավաճառքի գնի մեթոդը կամ «ծախսումներ պյուս մեթոդը»: Նպատակահարմար է բացառապես արտաքին գործունեություն իրականացնող ընկերությունների համար հարկման հատուկ ռեժիմի սահմանում, որի շրջանակներում նպաստավոր պայմաններ կստեղծվեն օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում այդպիսի ընկերությունների ստեղծմանը: Խնդիրը կայանում է նրանում, որ նման օրենսդրական հիմքի բացակայությունը չի նպաստում Հայաստանի Հանրապետությունում նման ընկերությունների ստեղծման գործընթացին, քանի որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում սահմանված չեն հարկման առանձնահատկություններ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված և գրանցված կազմակերպությունների համար, որոնք գործունեություն են իրականացնում բացառապես Հայաստանի Հանրապետությունից դուրս: Այդպիսի նոր հարկման ռեժիմի մեթոդաբանությամբ անհրաժեշտ է սահմանել գործող հարկերի փոխարեն տնտեսական (հարկման) հատուկ ռեժիմում գործող կազմակերպությունների համար տարեկան վճար, որի կիրառման դեպքում այդ ռեժիմում գործող կազմակերպությունները կազատվեն հարկեր հաշվարկելու և վճարելու, ինչպես նաև համապատասխան հաշվետվու-



թյուններ, հայտարարագրեր և հաշվարկներ հարկային մարմին ներկայացնելու պարտավորություններից:

Առաջարկվող մեթոդաբանության սկզբունքի արդյունքում ակնկալվում է, որ կծնավորվի բարենպաստ դաշտ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված և բացառապես Հայաստանի Հանրապետությունից դուրս գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար, ինչն էլ կխթանի օտարերկրյա հիմնադիրներով կազմակերպությունների գրանցման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում

Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը, միանշանակ հանդիսանում է հարկաբյուջետային հարաբերությունների արդյունավետության բարձրացման կարևոր բաղադրիչներից մեկը: Ավելին, տարբեր երկրների կառավարությունների կարևորագույն խնդիրներից և վստահության բարձրացման ուղիներից մեկը հանդիսանում է բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը: Վերոնշյալ նպատակադրումների հստակեցման և արդյունավետ իրագործման համար, անշուշտ, չափազանց կարևոր նախադրյալ է հանդիսանում երկրի ռազմավարական զարգացման տեսլականի ուղենշման համար միջազգային առաջավոր փորձի հիման վրա և կանխատեսման լավագույն մոդելների կիրառմամբ ստացված արդյունքների մշակմամբ կազմված հետազայում համաշխարհային իրադարձություններ փոփոխություններով պայմանավորված վերանայման ճկուն հնարավորություններ ունեցող ռազմավարական զարգացման ծրագրի ներդրումը: Նման ծրագիրը կառավարության համար ճանապարհ է միավորելու ազգային ներուժը երկրի երկարաժամկետ զարգացման տեսլականի ձևավորման շուրջ՝ հաշվի առնելով ձևավորված փորձը, առկա պայմաններն ու զլոբալ զարգացման մարտահրավերները: Ծախսերի արդյունավետության բարձրացման ապահովմանն ուղղված հաջորդ քայլը պետք է հանդիսանա պետական բյուջեի և տնտեսության զարգացման հեռանկարային ծրագրի առաջնահերթությունների միջև համապատասխանության ապահովումը: Տվյալ խնդրի համակողմանի լուծման նպատակով իր ուրույն դերը կարող է ունենալ ներկայումս աշխարհի շատ երկրներում ներդրված, իսկ շատերում էլ ներդրման փուլի մեջ գտնվող ծրագրային բյուջետավորումը: Ծրագրային բյուջետավորումը, որպես պետական ֆինանսների կառավարման արդիական և առավել արդյունավետ տարբերակ, արագ տարածում է գտնում ամբողջ աշխարհում: Ծրագրային բյուջետավորման միասնական ու հստակ բնորոշում գոյություն չունի. դա պայմանավորված է վերջինիս համակարգային, հրապարակային և էվոլյուցիոն զարգացման հանգամանքով: Ծրագրային բյուջետավորման հիմնական բնորոշ գծերից է բյուջետային գումարների դիմաց մատուցվող ծառայությունների և արդյունքների թափանցիկության և հաշվետվականության արժեքները, որի պարագայում պետական բյուջեի միջոցներով մատուցվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների գործունեության ոչ ֆինանսական արդյունքներից ու ցանիշները նույնքան կարևոր են համարվում, որքան և ֆինանսականը. «շնորհիվ արդյունքների վերաբերյալ հաշվետվության և հետևողական մոնիտորինգի ծրագրային բյուջետավորումը թույլ է տալիս ժամանակին հայտնաբերել պետական մարմինների գործունեության, մատուցվող ծառայությունների և ոչ

ֆինանսական արդյունքների հետ կապված խնդիրները և շտկել դրանք»<sup>21</sup>: Վերը նշված բյուջետավորման մեթոդի ներդրումը, ինչպես ցանկացած բարեփոխում, պահանջում է լուրջ և երկարաժամկետ նախապատրաստական աշխատանքների իրականացում: Դա պետք է ներառի.

➤ պետական մարմինների տարբեր մակարդակի մասնագետների և ղեկավար անձնակազմի, լայնածավալ և պարբերական վերապատրաստման կազմակերպում, որը հնարավորություն կընձեռի նրանց ծանոթանալու այդ մեթոդներին, տիրապետելու դրանց կիրառման ժամանակ առաջադրվող նոր պահանջներին բավարար ունակություններ դրսևորելու համար անհրաժեշտ զանազան անալիտիկ գործիքներին, ինչպես նաև՝ հասկանալու այդ մեթոդների կիրառման առավելությունները,

➤ բյուջետավորման նոր մեթոդներին համապատասխանող բյուջեի կատարման, աուդիտի, հաշվետվողականության և վերահսկողության՝ հետևողականորեն իրար փոխլրացնող համակարգերի մշակում և ներդրում,

➤ վերը նշվածի իրագործման համար համապատասխան խորհրդատվական և ֆինանսա-տեխնիկական ապահովման առկայություն:

Ծրագրային բյուջետավորման սկզբունքների հիման վրա պետական ծախսերի կառավարումն ի վիճակի է բարձրացնել պետական ծախսերի կատարման արդյունավետությունը՝ հանրության համար իրականում կարևոր ուղղություններում ռեսուրսների կենտրոնացման շնորհիվ՝ ապահովելով պետական բյուջեի և տնտեսության զարգացման հեռանկարային ծրագրի առաջնահերթությունների միջև համապատասխանություն հիմնական քաղաքականություններին և գերակայություններին բյուջետային ծախսերի կապի ամրապնդման և արդյունքայնության գնահատման միջոցով: Վերոնշյալ մեթոդը կնպաստի պետական բյուջեի ծախսերի արդյունավետության բարձրացմանը բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մոնիթորինգի և հաշվետվողականության ժամանակակից համակարգի՝ ոչ ֆինանսական չափորոշիչների կիրառմամբ գնահատման կատարելագործման և ընդլայնման մեթոդաբանական սկզբունքի վրա հիմնված զարգացման շնորհիվ:

Երրորդ գլխում քննարկվել նաև Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ-ի անդամակցության հնարավոր ազդեցությունները հարկաբյուջետային հարաբերությունների վրա, արդյունքում, մասնավորապես, հանգելով այն տեսակետին, որ այդ համակարգին անդամակցությամբ մակրոմակարդակում, չնայած հնարավոր ռիսկերի, կարող են ստեղծվել որոշակի նախադրյալներ դրական տեղաշարժերի արձանագրման համար: Մասնավորապես, այդպիսի նախադրյալներ կարող են հանդիսանալ ներդրումների և տրանսֆերտների աճը, որոնք առանցքային գործոններ են ամբողջական պահանջարկի ընդլայնման համար: Այլ համակարգի անդամակցումը, հեղինակի կարծիքով, ՀՀ –ի համար համեմատաբար կլինի առավել ռիսկային:

<sup>21</sup>Иполитов К. Х. «Экономическая безопасность: стратегия механизмы саморегуляции в рыночной экономике (мировой опыт и Россия)», Вопросы экономики N 3, 1996 г. 14-22:

**Եզրակացություններ** մասում ամփոփվել և ներկայացվել են ատենախոսության հիմնական եզրահանգումները.

1. հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջիկա տարիների ընթացքում պետական բյուջեի հարկման բազաների ընդլայնումը՝ պայմանավորված այդ ժամանակահատվածում պետական բյուջեի եկամուտների ավելացումը բացառապես ներքին ռեսուրսների հաշվին իրականացման անհրաժեշտությամբ, իր բացասական ազդեցությունը կարող է ունենալ գործարարության վրա, երկարաժամկետ հատվածի համար պետք է կարևորություն տրվի շքեղության հարկի կիրառմանը, ինչը հնարավորություն կընձեռի առանց սոցիալական ցնցումների լրացուցիչ հարկեր հավաքագրել հասարակության՝ առավել բարձր եկամուտներ ունեցող խմբերից՝ դրանով իսկ նպաստելով նաև հասարակության եկամուտների վերաբաշխման գործառույթի արդյունավետ իրագործմանը, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների շրջանակի ընդլայնմանը, քանի որ այդ մասով իրականացված միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ հարկով հարկվող ապրանքների շրջանակը մեր հանրապետությունում համեմատաբար նեղ է և ընդլայնվելու ներուժ ունի, ընդ որում, այդ ապրանքների ընտրությունը պետք է կատարվի այն սկզբունքով, որ հնարավոր լինի իրագործել ակցիզային հարկին վերապահված՝ վնասակար բարիքների սպառման կրճատման, հասարակության եկամուտների վերաբաշխման ու պետական բյուջեի հարկային եկամուտների համալրման գործառույթների լիարժեք իրականացումը, ինչպես նաև անհրաժեշտ է իրականացնել տնտեսության ֆինանսական հատվածում գործող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող ոչ տոկոսային եկամուտների ԱԱՀ-ից ազատման արտոնության վերացման՝ հնարավորությունների ու նպատակահարմարության ուսումնասիրություն՝ համադրելով նաև խնդրո առարկա հարցի վերաբերյալ Արժույթի Միջազգային Հիմնադրամի, Համաշխարհային Բանկի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեսակետները,

2. ներկայումս մեր հանրապետությունում միայն հարկային մարմնի կողմից իրականացվող հարկային ստուգումների համակարգին անհրաժեշտ է ստեղծել հակակշիռ և տնտեսավարող սուբյեկտների համար այլընտրանք՝ միաժամանակ նպաստելով հարկային համակարգի արդյունավետության և տարածաշրջանային մակարդակով մրցունակության բարձրացմանը, ինչի համար նպատակահարմար է ներդնել մասնավոր կազմակերպությունների միջոցով իրականացվող այլընտրանքային հարկային ստուգումների համակարգ,

3. ինչպես արդեն եզրակացրել ենք, հարկային հարաբերությունների ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունենում նաև հարկի վերաբերյալ մարդկանց հոգեբանական ընկալման աստիճանը և ելնելով դրանից՝ առաջարկում ենք այդ ուղղությամբ աշխատանքներ իրականացնել դեռևս միջնակարգ կրթության ժամանակ, ինչը մերկարծիքով հնարավորություն կտա շատ առումներով բարեփոխել հասարակության վերաբերմունքը հարկերի, հարկային համակարգի և հարկահավաքման գործընթացի նկատմամբ՝ նպաստելով հարկային հարաբերությունների զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանը: Ասվածի համար ուշագրավա է հետևյալը. համաձայն ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործա-

կալության պատվերով հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից մեր հանրապետությունում իրականացված՝ «Հարկային ընկալումները Հայաստանում. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների 2013թ. Հետազոտություն» Հայաստանի հարկային բարեփոխումների ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությամբ արձանագրված արդյունքների<sup>22</sup>, հարցվածների միայն 10 տոկոսն է գիտակցված պատասխանել այն հարցին, որ հարկ վճարելով նպաստում է հանրային խնդիրների լուծմանը՝ կատարելով իր քաղաքացիական պարտքը<sup>23</sup>,

4. շրջանառության հարկի գործարկման հետ զուգընթաց հատկապես գերփոքր տնտեսավարողների կողմից առաջացան դժգոհություններ՝ կապված դրույքաչփերի բարձր լինելու հետ: Այս հանգամանքին ուշադրություն դարձնելը շատ կարևոր է, որովհետև գերփոքր տնտեսավարողների համար հարկային բեռի ավելացումը կունենա տնտեսական գործունեության խոչընդոտող ազդեցություն սուղ ֆինանսական միջոցների պատճառով: Այդ խնդրի կարագավորման նպատակով առաջարկում ենք սահմանել շրջանառության հարկի տարբերակված հետևյալ դրույքաչափերը. այն տնտեսավարող սուբյեկտների համար, որոնք կարող են ծախսը հիմնավորող փաստաթղթերով հիմնավորել իրենց իրացման ձեռքբերումների 80 և ավելի տոկոսը, շրջանառության հարկը սահմանել մեկ տոկոս, 2 տոկոս՝ ապրանքների ձեռքբերման առնվազն 50 տոկոսի չափով փաստաթղթավորելու դեպքում և 3.5 տոկոս՝ ընդհանրապես չփաստաթղթավորելու դեպքում, ինչը հնարավորություն կտա պահպանել հարկման հորիզոնական արդարության սկզբունքը,

5. անկախ ծառայություն մատուցողին կամ մատակարարին վճարումների, ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու նպատակով ներդնել հաշվառման հաշվեգրման մեթոդը՝ ԱԱՀ վճարողներին հնարավորություն ընձեռելով ԱԱՀ-ի գծով հաշվանցումները կատարելու նաև այդ դեպքերում,

6. անհրաժեշտ է հարկային համակարգին վերաբերող որոշումների նախագծերը ներկայացվեն հասարակական լայն քննարկման և որոշումներ կայացվեն շահագրգիռ բոլոր կողմերի տեսակետների և դրանց վերաբերյալ հիմնավոր եզրահանգումների առկայության պայմաններում, քանի որ վերոնշյալ հարցման<sup>24</sup> արդյունքների համաձայն, գործարարների հիմնական մասը՝ 76 %-ը, հարկային համակարգը համարել է անկանխատեսելի, նրանք նշել են, որ չեն կարող կանխատեսել, թե որքան կլինի իրենց հարկային բեռը հաջորդ տարի, տրամաբանական է, որ հարկային բեռը անկանխատեսելի համարելով՝ գործարարները նաև համոզված են, որ իրենք ներգրավված չեն հարկային օրենսդրության մեջ փոփոխություններ նախատեսող նախաձեռնությունների քննարկումներին (94 %), կամ

<sup>22</sup> www.trp.am

<sup>23</sup> «Հարկային ընկալումները Հայաստանում. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների 2013թ. հետազոտություն», էջ 4:

<sup>24</sup> www.trp.am

էլ՝ ներգրավված են, սակայն չեն կարողանում որևէ ազդեցություն ունենալ (6 %)»<sup>25</sup>:

7. քանի որ ներկայումս մեր հանրապետության հարկային համակարգի կառուցվածքը թույլ է տալիս կատարել տրանսֆերային գնագոյացման չարաշահումներ, դրա դեմ արդյունավետ պայքարի նպատակով ՀՀ-ում անհրաժեշտ է ներդնել տրանսֆերային գնագոյացման դեմ պայքարի համակարգ,

8. անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել ռիսկերի կառավարման համակարգը մաքսային աշխատանքներում, քանի որ այն կարևոր ներդրում կարող է լինել ինչպես գործարար միջավայրի բարելավման, այնպես էլ մաքսային մարմինների աշխատանքի արդյունավետության աստիճանի բարձրացման տեսանկյունից՝ հաշվի առնելով այն, որ այդ համակարգի կատարելագործումը բարեխիղճ և ոչ ռիսկային տնտեսավարող սուբյեկտներին մաքսային պարզեցված ու արագացված ընթացակարգերից օգտվելու հնարավորություն կընձեռի, իսկ մաքսային մարմիններին՝ առավել արդյունավետ ձևով օգտագործելու վարչարարական կարողությունները՝ կենտրոնանալով առավել ռիսկային համարվող տնտեսավարող սուբյեկտների ու գործարքների հսկողության իրականացման վրա,

9. հարկ վճարող և հարկային մարմին շփումների նվազեցման և կոռուպցիոն ռիսկերի կրճատման, ինչպես նաև հարկ վճարողների ինքնագնահատման զարգացման ու ընդլայնման նկատառումներով պայմանավորված՝ առաջարկում ենք մեր հանրապետությունում ներդնել հարկային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրվող բոլոր եկամտատեսակների գծով միասնական և ավտոմատ հաշվառման համակարգ, որը հնարավորություն կստեղծի հարկային մարմնում վարվող հաշվառման բոլոր հարցերի ծրագրավորմամբ ամբողջովին ավտոմատացված հաշվառման համակարգ ունենալուն և այդ առումով մարդկային գործոնը բացառելու,

10. հարկային հարբերությունների զարգացման և հարկատու-հարկային մարմին շփման կրճատման նպատակով առաջարկում ենք ներդնել այնպիսի համակարգ, որը նամակի կամ հեռախոսազանգի միջոցով կհիշեցնի հարկատուին ժամկետանց հարկի գումարի մասին,

11. մեր հանրապետության հարկային համակարգում, կապված պետական կառավարման մարմինների կողմից հարկային պարտավորություններ առաջացնող գործարքների վերաբերյալ հարկային մարմիններին տեղեկատվությունների տրամադրման հետ, առկա են որոշակի անկատարություններ, դրանց վերացումը կարող է կարևոր գործոն հանդիսանալ ստվերային գործարքների բացահայտման և ստվերի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է զարգացնել և ընդլայնել պետական կառավարման համապատասխան մարմիններից հարկային պարտավորություն առաջացնող գործարքների վերաբերյալ հնարավորինս կարճ ժամկետում հարկային մարմիններին տեղեկությունների տրամադրման համակարգը,

<sup>25</sup> «Հարկային ընկալումները Հայաստանում. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների 2013թ. հետազոտություն», էջ 4:

12. անհրաժեշտ է ստեղծել հարկերի հավաքագրման այնպիսի համակարգ, որի առկայության պայմաններում հարկային մարմինների գերխնդիրը կլինի հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ անաչառ վերահսկողությունը, իսկ հարկատուները կգերադասեն օրենսդրության պահանջների կատարումը և ձեռնպահ կմնան հարկումից խուսափելուց,

13. քանի որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում սահմանված չեն հարկման առանձնահատկություններ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված և գրանցված կազմակերպությունների համար, որոնք գործունեություն են իրականացնում բացառապես Հայաստանի Հանրապետությունից դուրս, առաջարկում ենք նման ընկերությունների համար ներդնել հարկման հատուկ ռեժիմ, որի շրջանակներում նպաստավոր պայմաններ կստեղծվեն օտարերկյա իրավաբանական անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում այդպիսի ընկերությունների ստեղծմանը: Այդպիսի նոր հարկման ռեժիմի մեթոդաբանությամբ անհրաժեշտ է սահմանել գործող հարկերի փոխարեն տնտեսական (հարկման) հատուկ ռեժիմում գործող կազմակերպությունների համար տարեկան վճար, որի կիրառման դեպքում այդ ռեժիմում գործող կազմակերպությունները կազատվեն հարկեր հաշվարկելու և վճարելու, ինչպես նաև համապատասխան հաշվետվություններ, հայտարարագրեր և հաշվարկներ հարկային մարմին ներկայացնելու պարտավորություններից,

14. անհրաժեշտ է հարկման արդարացիության սկզբունքի ամրապնդումը դարձնել հետևողական աշխատանքների իրականացման առարկա, ինչի արդյունքում պետք է երաշխավորվի օրենքի գերակայությանկիրառում բոլոր հարկ վճարողների նկատմամբ: Ասվածի անհրաժեշտությունն ընդգծվում է նաև վերոնշյալ հետազոտությամբ արձանագրված արդյունքներով, համաձայն որի հարցվածների 89.5 տոկոսը լիովին կամ մասամբ համամիտ են այն տեսակետին, որ. «եթե մարդիկ հավատան, որ հարկերն արդար են, նրանք միշտ պատրաստական կլինեն վճարել դրանք»<sup>26</sup>, արդար հասարակություն ունենալը շատ ավելի կարևոր է մարդկանց համար, քան հարկերն ինքնին,

15. ընհանուր առմամբ պետական ծախսերն ունեն «հետևանքային բնույթ», դրանց իրականացման անհրաժեշտությունը բխում է պետության ֆունկցիոնալ խնդիրների բովանդակությունից, իսկ պետական ծախսերի կառավարման համակարգը կոչված է ապահովելու հիշյալ ֆունկցիոնալ խնդիրների լուծումը, ուստի և պետականն ծախսերի արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտման համար հատկապես կարևորվում է պետության հիմնական խնդիրների առանձնացումը, քանզի վերջիններիս ապահովման համար է, որ պետությունը կատարում է այս կամ այն տիպի ծախսերը և հետևաբար՝ հենց պետության խնդիրներն են որոշում պետական ծախսերի կառուցվածքն ու ընդգրկման շրջանակները,

16. ծախսերի արդյունավետության բարձրացման համար կարևոր, որ դրանք իրականացվեն տնտեսական համակարգի կայունացմանը և ընդլայնմանն ու

<sup>26</sup> «Հարկային ընկալումները Հայաստանում. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների 2013թ. հետազոտություն», էջ 4:

զարգացման ապահովմանը միտված ռազմավարական ծրագրերի հիման վրա, որոնք առանցքային ուղենիշներով կսահմանեն տնտեսական համակարգի աճի ապահովմանը միտված հետագայում համաշխարհային տնտեսական իրադրությունների փոփոխություններին համապատասխան արագ վերանայման հնարավորությամբ միջոցառումներ առնվազն առաջաիկա 25-30 տարիների համար, որոնց հիման վրա էլ պետք է մշակվեն միջնաժամկետ և տարեկան ծրագրեր,

17. բյուջետային ծախսերից ստացվող արդյունքների ցուցանիշների բարելավման համար անհրաժեշտ է դրանց հատկացումը իրականացնել ակնկալվող արդյունքների քանակապես չափելի ծրագրերի ներկայացման դեպքում և անհրաժեշտ է մշտապես մոնիտորինգի միջոցով հետևել առաջադրված ցուցանիշների ապահովման նակարդակին՝ դրանց անբավարար արդյունքների դեպքում ծախսերի հատկացումը դադարեցնելու նպատակով,

18. միջազգային փորձը վկայում է այն մասին, որ ծրագրային բյուջետավորումը աշխարհում համարվում է որպես պետական ծախսերի արդյունավետությանն հիմնավորվածության աստիճանի ավելացման առավել ընդունելի ու խոստումնալից եղանակ, որի ներդրմամբ անհրաժեշտություն է առաջանում պետական մարմիններին հստակեցնել իրենց առջև դրվող հիմնական նպատակները և սահմանելու այդ նպատակների նվաճման համար հնարավոր մի քանի այլընտրանքային ուղիներ և որի առանձնահատկությունների համաձայն՝ բյուջետավորման նոր սկզբունքը նպատակաուղղվում է սուղ միջոցների օգտագործման հասցեականության մեծացմանը, ինչին նպաստում է պարզորոշումն այն հարցի վերաբերյալ, թե ինչ է մատուցվում օգտագործվող բյուջետային ռեսուրսների դիմաց,

19. անհրաժեշտ է ծրագրային բյուջետավորման նոր մեթոդներին համապատասխանող բյուջեի կատարման, աուդիտի, հաշվետվողականության և վերահսկողության՝ հետևողականորեն իրար փոխլրացնող համակարգեր մշակել և ներդնել,

20. մեր հանրապետության տնտեսությունը փոքր բաց տնտեսություն է, որի վրա մեծ ազդեցություն են ունենում արտաքին աշխարհից եկող անորոշությունների բացասական հետևանքները և նման իրավիճակը ուղղակիորեն և անուղղակիորեն կարող է անդրադառնալ տնտեսական աճի, գնաձային միջավայրի, փոխարժեքի և այլ նակրոտնտեսական ցուցանիշների վրա, որոնք էական ազդեցություն են ունենում բյուջեի հոսքերի վրա, հետևաբար այս անցանկալի երևույթների հնարավոր բացասական հետևանքների մեղման կամ չեզոքացման համար անհրաժեշտ է մշակել և ներդնել ռիսկերի կառավարման համալիր ծրագիր, ինչը րագ արծագանքման միջոցով հնարավորություն կստեղծի խուսափելու լրացուցիչ կորուստներից,

21. ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացի արդյունավետության վրա բացասական է ազդում այդ գործընթացում ներգրավված պատասխանատու անձնակազմի համապատասխան մասնագիտական ոչ համարժեք պատրաստվածությունը: Նշված խնդրի կարգավորման նպատակով անհրաժեշտ է պետական մարմինների՝ արդյունքների վրա հիմնված բյուջետավորման կիրառման ուղղությամբ կարողությունների զարգացման նպատակով, որպես պետական

բյուջեի ծախսերի արդյունավետության և հիմնավորվածության աստիճանի ավելացման առավել ընդունելի ու խոստումնալից տարբերակի՝ այդ գործընթացում ներգրված պատասխանատու մասնագետներին շարունակական մասնագիտական զարգացման շնորհիվ «զինել» արդիական ու համարժեք գիտելիքներով:

**Ատենախոսության թեման ներկայացվել է հեղինակի հետևյալ յոթ գիտական հոդվածներում.**

1. Ներսիսյան Ա. Ռ., Ղազարյան Վ. Լ., «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի վերջին տարիների բարեփոխումների հիմնական ուղղությունները և առկա հիմնախնդիրները», «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3, 2011թ., ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, էջ 99-102,

2. Ղազարյան Վ. Լ., «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների կանխատեսումները», «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու թիվ 3, 2011թ., ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, էջ 109-115,

3. Ղազարյան Վ. Լ., «Հարկաբյուջետային քաղաքականության ձևավորման առանձնահատկությունները և արդյունավետության բարձրացման ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում», «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու թիվ 2(8), 2013թ., ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, էջ 185-190,

4. Ղազարյան Վ. Լ., «Շուկայական տնտեսական համակարգի պետական կարգավորման հիմնախնդիրների վերաբերյալ», «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես (իրավագիտություն, մանկավարժություն, տնտեսագիտություն) 7-8 (38)2013թ., «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, էջ 167-170,

5. Ղազարյան Վ. Լ., «Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացումը ՀՀ-ում ձգնաժամի ժամանակ և ձգնաժամից հետո», «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես (իրավագիտություն, մանկավարժություն, տնտեսագիտություն) 10-12(39) 2013թ., «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, էջ 212-215,

6. Ղազարյան Վ. Լ., «Շուկայական տնտեսության պետական կարգավորման տեսական հիմնախնդիրները», «Հանրային կառավարում» գիտական հանդես, հոբեյլանական թողարկում, 1-2/2014թ., ՀՀ պետական կառավարման ակադեմիա, էջ 180-188,

7. Ղազարյան Վ. Լ., «Հարկային համակարգի բարեփոխումների շուրջ», ԵՊՀ Տարեգիրք 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր.: ԵՊՀ հրատ. 2014, էջ612-617:



**КАЗАРЯН ВАНЯ ЛАВРЕНТИКОВИЧ**  
**ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ НАЛОГОВО-БЮДЖЕТНЫХ ОТНОШЕНИЙ В РА**

*Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01: «Общая экономика».*

*Защита диссертации состоится 29-го декабря 2014 г, в 11:00 часов, на заседании специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете по адресу г. Ереван. 009, ул. Абовяна 52.*

**Резюме**

Основной целью диссертации является разработка подходов и предложений, направленных на развитие налогово-бюджетных отношений, обусловленных соображениями содействия совершенствованию рыночной системе хозяйствования и повышению эффективности налогово-бюджетных отношений, для достижения чего в работе были поставлены и решены следующие задачи:

- Изучить особенности, характеризующие рыночную систему хозяйствования, акцентируясь на задачах необходимости государственного вмешательства в эту систему и различных экономических подходах, посвященных им, в хронологическом порядке;
- Рассмотреть также проблемы развития налогово-бюджетных отношений в контексте сочетания с денежно-кредитной политикой;
- Представить предложения по повышению эффективности бюджетного расходования;
- С целью развития налоговых отношений исследовать налоговую систему РА и представить подходы к осуществлению реформ;
- Оценить возможные влияния членства РА в ЕЭС (Евразийский Экономический Союз) на налогово-бюджетные отношения.

Объект диссертации – проблемы развития налогово-бюджетных отношений, ее предмет – налогово-бюджетная система РА.

Первая глава посвящена представлению особенностей экономических систем, возникновению института государства в обществе и его необходимости для организации общественной жизни, а также обоснованию важности осуществления государственных мероприятий с целью обеспечения нормальной деятельности рыночной экономической системы.

Вторая глава относится к описанию налогово-бюджетных и денежно-кредитных отношений и необходимости их сочетания с целью повышения эффективности этих отношений.

Третья глава посвящена определению направлений развития налогово-бюджетных отношений и исследованию их возможного совершенствования.

Основные научные результаты диссертации заключаются в следующем:

- С целью решения проблем трансферного ценообразования в условиях нынешней структуры налоговой системы РА предлагается внедрить такую методологию борьбы с трансферным ценообразованием, в рамках которой в качестве предмета регулирования должны выступить, в особенности, международные сделки, имеющие место между аффилированными лицами, а также сделки, осуществляемые с зарегистрированными в оффшорных зонах лицами, используя для оценки их объективности метод сопоставимой неконтролируемой цены, метод цены перепродажи или метод “затраты плюс”;
- Для того, чтобы иметь наиболее эффективную и удобопонятную налоговую систему, представляется важной необходимостью внедрения и расширения такого методического принципа в законотворческих процессах касательно налоговых отношений, при которой проекты, относящиеся к налоговой системе, будут представлены к обсуждению всем заинтересованным сторонам, а при наличии у последних собственных точек зрения и обоснованных доводов по ним, решения будут приниматься с их учетом;
- В настоящее время в нашей республике лишь в противовес системе налоговых проверок, осуществляемых налоговым органом, и в качестве альтернативы для хозяйствующих субъектов, предложено внедрение в систему налоговых проверок нового принципа, согласно которому налоговые проверки будут осуществляться также с помощью соответствующих специализированных организаций частного сектора, что, при внедрении этого принципа, создаст предпосылки обеспечить в процессе налоговых проверок также конкурентноспособность с ее положительными последствиями;
- В целях содействия повышению эффективности бюджетного расходования предлагается в основе политик и приоритетов укрепления связи и оценки результативности бюджетных расходов развивать систему мониторинга и отчетности государственных расходов, основываясь на методическом принципе совершенствования и расширения оценки, с применением нефинансовых критериев.

**GHAZARYAN VANYA LAVRENT**  
**DEVELOPMENT PROBLEMS OF FISCAL RELATIONS IN RA**

*The abstract of the dissertation for pursuing degree of PhD of Economics in the field 08.00.01 «General economics».*

*The defense of the dissertation will take place at 11:00 on December 29, 2014 at the Meeting of Specialized Council 015 of Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University , Adress: 52 Abovyan, Yerevan, 009.*

**Abstract**

The main aim of the dissertation is the analysis of approaches and recommendations of development of fiscal relations in order to improve the market economic system and increasing efficiency considerations. In order to get it we put and solved the following issues:

- To study the characteristic features of a market economic system, stressing the need for state intervention on the system and economic approaches to their various destinations according to chronological sequence.
- Problems of development of fiscal relations observed in association with the context of monetary policy
- submit recommendations to enhance the effectiveness of budget expenditures
- for development of tax relations to investigate the tax system of RA and approaches to the implementation of reforms
- evaluate the EEC (European Economic Union) RA memberships' possible effects of accession on fiscal relations.

*The objects of dissertation* are the problems of development fiscal relations, and the subject is the RA fiscal system.

The first chapter is devoted to the presentation of the characteristics of the economic systems, emerge of state University in society and its necessity for the

organization of social life, and also for ensuring the normal functioning of the market economic system.

The second chapter is devoted to description of fiscal and monetary relations, and to development of effectiveness of their combination.

The third chapter is devoted to decisions about directions of development of relations and to opportunities of their study improvement.

The main scientific results of the thesis lies in the following:

➤ In conditions of current RA tax system structure in order to solve the problems of transfer pricing we suggest to invest such fighting techniques against transfer pricing, within which as regulation subject should be international transactions between connected persons, and also between persons who registered in offshore zone.

➤ In order to assess their objectivity are used comparable uncontrolled price method, resale price method or "cost plus method". For having more effective and intelligible tax system we highlighted the relations of tax courses such methodological principle of expanding the application of inculcation and the necessity of extending its use. In this case the tax system will be presented to all interested parties for the draft discussion, and their views and conclusions will be presented by taking them into consideration.

➤ Nowadays in our republic only audits by tax authorities on the tax system for new business entities: as alternative recommended to invest new principle of the tax system. According to tax inspection will involve the private sector through appropriate professional organizations, and which will create prerequisites for developing rivalry with its positive consequences.

➤ In order to contribute to increasing the efficiency of public spending it is suggested to develop the main policies and priorities for public expenditure budget expenditure monitoring and evaluation of communication in strengthening accountability system, based on financial improvement and expansion of the use of non-financial assessment of the methodological principle.

